թագաւորն և մեր թագուհին, հանդերձ որդւովք իւրեանց, մեռելոց կարգ կատարեցին, որ զամենեա[յ]ն մարդ յարտասուս հարին։ Զայս արարին և յաւուր հասարակաց ննջեցելոց, դնելով ի վերայ սեաւ չալի զզէնս պատերազմաց։ Եւ այնչափ տկարացուցին զթշնամին մինչ զի բազում միջոցիւք ի հաշտութիւն խոնարհիլ կամի. բայց սոքա ամենեքին ոչ կամին։ Ցինկիլթէռայու եկն ասա իշխան մի խօսիլ ի հաշտութիւն. թագուհին մեր ոչ ետ ավտիէնցայ, քանզի եհարց եթէ յորոյ կողմանէ եկն խօսիլ ի հաշտութիւն. իւր թագաւորի՞ն եթէ փռուսեային։ Եթէ իւր թագաւորին կողմանէ եկն, եկեսցէ առ իս, բայց եթէ փռուսեային մի՛ ամենևին երևեսցի առաջի իմ։ Աստուծով դուքս մի ունիմք զօրաց փաւօն անուն. յիրաւի է պռավօ, զոր ամենեքին սիրեն. և թագուհին որդի իւր անուանէ. այր հմուտ պատերազմի. և օրտուն ասեն եթէ այնպիսի յօրինեալ ամենայն իրօք, մինչ զի յոչ ումեք ժամանակի այսպիսի օստու ունեցեալ է նէմցէն։ Սակայն այս ազքս յոյժ ապերախտ է և կամեցան ոմանք իշխանք լօթռանք առ նախանձու խախք առնել զսա ի պատերազմի. քանզի նոքա որոց անկ էր զզէնս պատերազմի պատրաստել և առաքել ոչ առաքեցին զի յաղթիցի. բայց Աստուած լսելով հանապազօրեայ զաղօթս թագուհւոյն իմացան զնենգութիւն նոցա և պատժեցին և ոմանք ի բանտի կան որք ըմբռնեցան, վասն զի տային ի ծածուկ օգնութիւն կերլեաց փռուսիայէն։ Այնչափ քաջութեամբ մարտնչին զօրք մեր մինչ զի ասացեալ է թագաւորն փռուսեային, թէ զարմանամ զի՞րդ կան ընդդէմ հրոյս արիաբար զօրք տամային ավստռային. (այսպէս անուանէ զմեր թագուհին անիծածն). առ այժմ լռութիւն է, վասն զի ձմեռ են։...

յամի տեառն 1756 *Նոյեմ.* 20 *ի Վեննայ*

Արբութեանդ ծնամ ծառայ
Հ. Գէվորք վրդ.

ՄԲ.

Յոյն և Հայ վաճառականներու մասին դէպքեր կը պատմուին Հ. Յովհաննէս Լազեանէ։ Սա է Հ. Յովհ. Տրապիզոնցին, որ և կը ստորագրէ Պոնտացի, ևն։

Գերապատիւ տեառն տեառն Ստեփաննոս վարդապետի և Առաջնորդ մերում
խոնարհութեամբ համբոյր աջոյն

... Լուաք, թէ սրբազան պապն մեր փոխեալ իցէ առ Աստուած... Գրեցից և զանցս անցեալս ընդ ոմանս՝ վաճառականս յունաց։ Արքունի հրամանաւ սաստիկ փակեալ են Նազարէթք ընդդէմ ընչից. այլ համարձակ վասն մարդկանց. արդ յոյնք ոմանք բերեալ զմուշտակս ի պէլրդատ, և անդ թողեալ, ինքեանք մտեալ են ի Նազարէթ. և ապա գյոլով զբեռինս մուշտակաց ի ձեռն ոմանց պուլղարաց գաղտագողի փախուցեալ են ի մեր կողմն առանց Նազարէթի։ Եւ ի լրանալ ժամանակին, ինքեանք ելեալ ի Նազարէթէն, և բերեալ զմուշտակսն ի յէրսէկ, վաճառեալ են ի տօնավաճառն սրբոյն սեբաստիանոսի։ Ուր յայտնեալ նենգութեան նոցա, զերկուս փախուցօղսն անդէն վաղվաղակի ի չորս մասունս հատեալ, կախեցին յանցս ճանապարհաց։ Իսկ զմնացեալսն՝ թուով աւելի քան զտասն երկաթի կապանօք ածին այսր, որոց կատարածն եղիցի սուր և հուր։ Սմին նման և զայլ ինչ լուաք, այլ զստոյգն ոչ գիտեմք. ի մեծ մաճառս՝ ի կողմանս տօպրօցինու հայք ոմանք զմորթս եզանց փախուցեալ ի նազարէթ, հասուցեալ են յազատ գիւղ մի, և անդ թազուցեալ՝ ինքեանք և ինչք իւրեանց։ Իսկ ի յայտնիլ բանին, զտեարս մորթոցն եդեալ ի շղթայս, և ընդ նոսա զամենայն գիւղականսն վարեալ ի տեղին, ուստի փախուցեալ էն զմորթսն առանց Նազարէթի, և զգիւղն և զմորթսն, և զամենայն կազմած, և զինչս գեղջն հուրբ դատեալ են, զի մի՛ ցաւ ինչ տարածեսցի ի գեղջէն։...

[1]757 *փետր.* 25 *ի Վարատին*

Նուաստ ծառայ
Հ. Յոհաննէս վրդ. Լազ.